

մեղ յիշեցնելու։ Լսենք այդ հրաւերի ձայնին և գործակցենք վերաշինութեան։

Բայց սրչափ մեծ է այդ վերաշինութեան կարիքը։ Այսօր ամբողջ ազգն աչք զրած սպասում է եկեղեցականութեան վերականգնուն, աւերակ եկեղեցիների և վաճքերի կառուցման անհապատացած վանքերի վերակազմութեան ժաղավրդի կրօնական բարձրական կրթութեան աստիճանի բարձրաց մասն, մայրենի լեզուի և զրականութեան բարգաւաճման և այլն։ Են։

Այս սմենին գտրման տանելու համար ընդհանուր գործակցութիւն է պէտք, հոկայական ձեռքերով օժտուած անհատն անդամ կարող չէ միայնակ այսքան բազմազան և բազմաթիւ գործերի կատարումն յանձն տանել։

Միութիւնը ոյժ է, աչա մեր գարու նշանաբանը, ինչո՞ւ չինք կամենում իսկական զաւակներ լինել մեր գարու։

Ով փոխանակ գործելու խօսում է, նա հողմարած է, ով իւր գործակցութիւնը միայն խծրծելով է աւարտում նա յանցագործ է։

Աչա մի տարի է արգեն, որ «Է-Շ ՃԱՐԴԻՇՏԵ ՀԱՅՐ» կոչման արժանացած եկեղեցու Պետրա ամենքին գործի է հրաւերում»։

Ամենքս էլ գիտակից ենք մեր եկեղեցու պէտքերին, ամենքս էլ քաջ զիտենք այս կարիքները, որ պիտի լրացումն ստանան, ուստի և վէճ կարող չէ լինել մեր անելիքի մասին։ Եկեղեցու անհրաժեշտ կարիքներն հոգուն համար կարօտութիւն կայ ձեռների և ժամանակի։

Ժամանակը կը լրացնի մեր սրահները, երբ մեր ձեռները բացուին։ Ա. Էջմիածնի սէրը, որ միշտ վառ է եղել հայ սրտերում, թող մեղ թելադրէ պարտքներս կատարելու։

Ծանր է արդարեւ մեր ժամանակը։ Մեր սուրբ եկեղեցին գեռ նահատակների թափած արիւնով է ներկուում։ Այն տաճար ներից, սրտեցից սրբասացութեան ձայներ պիտի հնչեն այսօր լսումենք յսւսահա-

տութեան հառաջանքներ։ Այն եկեղեցին, որ պիտի պայծառանար իւր պաշտօնեաների ջանքով, այսօր ներկուումէ գեռ ևս նրանց արիւնով Աւրեմն գեռ չեն անցել փորձութեան դարերը, եկեղեցին գեռ ևս կարոտէ նոր նահատակների։

Միանանք մեր ազօմքներով և խնդրենք Ամենակալից փորձութեան օրերի վախճանը։

Միանանք գործերով և սփոփենք մեր հաւատակից նահատակների սրտերը, օգնութեան ձեռք կարկառենք նրանցն, որոնք Ա. Դրիգորի մեղ աւանդած ժառանգութեան պահպանութեան համար այսօր մոքառումեն։

Համբերատար է մեր նահատակ եկեղեցին, նա դիմացել է շատ հալածանքների և յաղթող է հանգիստացել, մեր յոյսն անգրդուելի է, այսուհետեւ ևս պիտի գիմանայ նա ամենայն փորձաճքի, եթէ մինչեւ իսկ պէտք լինի նորանոր նահատակութիւնների։

«Եկեղեցին ոչ մարդու ձեռքի շինուածք է, ոչ թագաւորների պարգև և ոչ ճարտարութեան արուեստ, նրա հիմքը ոչ ներքինները կարող են շարժել և ոչ վերինները զրդուցնել»։ Այս հաւատով են ապրել մեր նախնիք, որ այնքան սիրուն կիրազով արտադրացել է Նղիշէ սուրբ վարդապետը, այս հաւատով պիտի ապրենք և մենք։

Մեր այս պարտքն է աչա, որ միշտ լիշեցրել է Ա. Էջմիածնը և որ այսօր կրկին լիշեցնումէ։



## ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ.

ՊԱՌԱՍՏԱՆՈՒՄ.

ՄԱՅԻ ԱԹՈՒԹ.

ՆՈՐԻՆ ՕՆՈՒԹԵԱՆ  
ՎԵՀԱՓԱՄ ՀԱՅՐԱՎՈՒՏԻ ՄԵԿՆՈՒՄ  
Ի ՏՓՈՒԽԻ.

Դեկտեմբերի 18-ին, կիւրակէ օրը, ազգին Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռիցս մեկ-

նելուց առաջ, բարեհաճեց մի հրաժեշտի ճաշկերպիթ պատրաստել առաջ վանքի սեղանատանը: Աղջանին մասնակցեցին Պայր Աթոռի միտրանութիւնը և Շեմարանի յարգելի տեսուն ու ուսուցիչները, ժամի 12-ին Սորին Օծութիւնը բարեհաճեց իջնել վեհարանից միարանական սեղանատունը, ուր սեղանակից լինելով ներկայ եղողներին արժանացրեց նոցախը հայրական խրաններին ու յորդորանքներին յայտնելով իւր մեկնելու որոշումը: Վեհափառը Պայր Աթոռի միարանութեան, կրօնաւորների և Շեմարանի ուսուցչական խմբի կենաց բաժակն առաջարկեց և հարկաւոր համարեց իւր հրաժեշտի խօսքերի հետ միասին ի սկզ և ի համերաշխութիւն հրաւիրել ամենքին: Գերապատիւ Տ. Մերովը Արքեպիսկոպոսը միարանութեան որդիական անկեղծերախտագիտութեան և ջերմաջերմ սիրոյ զգացմանց թարգման հանդիսանալով՝ առաջարկեց Սորին Վեհափառութեան թանկագին կենացը, որ բուռն կեցցէներով ընդունուեցան բազմականների կողմից: Շեմարանի երգեցիկ խումբը բարեշնորհ հ. կոմիտասի առաջնորդութեամբ երգեց «Տէր, կեցո՞ զուզայ» հոգեբուղիս մաղթանքը:

Բազմականներն իրանց երջանիկ համարելով հանգերձ Սորին Արքութեան սեղանակցութեան համար՝ ակներեւ համակռւած էին տըլսրութեան զգացմունքով, որովհետեւ այդ ճաշն իրանց սիրեցեալ Հօրից բաժանուելու նշանն էր: Ամէնքի շրմունքները «բարի ճանապարհ» էին մրմնջում; ամէնքն էլ մաղթումէին ծերունազարդ Հայրապետին քաջառողջութիւն և յաջողութիւն իւր նպատակներին:

Յաջորդ օրը, երկուշաբթի, գեկումբերի 19-ին, ժամի 1-ին զինի կեսաւուր, Պայր Տաճարի մեջ զանգերի զօղանջիւնը յայտնեց Սորին Արքութեան ճանապարհ ելնելու ժամի մօտ լինելը, և միարանութիւնն շտապեց Վեհարան Վեհափառ Հայրապետի հրաժեշտի օրհնութիւնն առնելու: Այդտեղ կրկին անգամ սիրոյ յորդոր կարգալով միարանութեանը՝ Վեհափառը յայտնեց որ բարեհաճել է

իւր բացակայութեան ժամանակ աեղապահ կարգել Գերապատիւ Տ. Մերովը Արքեպիսկոպոսին:

Վանքի միարանութիւնից յետոյ բաղդ ու նեցան Նորին Արքութեան օրհնութիւնն առանելու Շեմարանի աեսուն, ուսուցիչներն ու աշակերտները, որոնց նայնպէս արժանացրեց իւր Հայրական խրաններին: Աշակերտներն երգեցին «Հայրիկ, Հայրիկ» սրտաշարժ երգը. Վեհափառ Հայրապետն զգացուեցաւ. մեծ և փոքր արաստում էին . . . :

Այսուհետեւ Սորին Վեհափառութիւնը իշտաւ Վեհարանից և օրհնելով վանքի բակում խանուած ժողովրդին՝ մտաւ Տաճարը, ուր Խնման աեղի առաջ ծնկաչոք, վեղարն հանած, երկար աղօթեց և ապա ելնելով Տաճարից, Շեմարանի աշակերտների շարքերի միջով և բազմութեան սրտաբուղին «կեցցէների» ուղիեցութեամբ գնաց գեպի զրաի զրան առաջ պատրաստի կանգնած կառքը: Զանգերի զօգանջիւնը և ժողովրդին անընդհատ «կեցցէների» աղաղակը օգն էին թնդացնում: ահա շարժուեցաւ Հայրապետական կառքը, առաջուց կառքով Հայրապետական խան ու դաւազանը տանումէին բար. հ. կոնդիկ և կոմիտաս արեղանները, իսկ Հայրապետի կառքի յետելից ընթացան Սորին Արքութեան հետեւօրդների և ուղեկցող միարանների ու ժողովրդականների կառքերն ու ձիանը:

Սորին Վեհափառութեան հետ մինչեւ Տրփիսիս զնումնեն Գերը. Կիւրեղ Եպիսկոպոս, բար. հ. հ. Բարգուղիմէսոս վարդապետ, Յուսիկ աւբեղայ, շնորհ. Վահան սարկաւագ և Պ. Խորէն Խորիմեան:

Վաղարշապատից հաղիւ չորս վերստ հեռացած էր Հայրապետական զնացքը, երբ Սորին Արքութեանը զիմաւորեց Երևանի Թամ. Առաջնորդի Գերը. Ոսխանորդ Տ. Կիւրեղ Արքութագանը, որ և իսկոյն միանալով զնացքին դարձան գեպի Երևան:

Փարաքար զիւղում քահանաներն ժողովրդը փողոցումը, ճանապարհի վրայ հաւաքուած, «կեցցէներով» զիմաւորեց Վեհ. Հայ-

բապետին, որ մի քանի վայրկեան կառքը կանգնեցնել տալով՝ օրհնեց ամենքին և գնացքը նոյն կարգով շարունակեց առաջ ընթանալ: Գիւղիցն ելնելով՝ Սորին Օծութիւնը դարձեալ կառքը կանգնեցնել տուաւ և օրհնեց Վաղարշապատից Խրան ձիով ուղեկցող քահանաներին և ժողովրդականներին, որոնք Փարաքարից յետ պիտի վերադառնային, և ապա շարունակեց Խր ճանապարհը գէպի Երեան:

### ՏԱՂԻԱՍԱՆՈՒՄ.

Դեկտեմբերի 23-ին Սորին Վեհափառութեան անունով հասած հեռագիրն հաղորդումէ, որ կ. Պոլսի Պատրիարք է ընտրուած Գերապատիւ Մատթէոս Եպիսկոպոս Խղմիրյանը, որ և Կայսերական յատուկ իրադէով հաստատուած է:

Տաճկական Հայաստանում տեղի ունեցած գործերի մասին սպասելով պաշտօնական տեղեկութիւնների կ. Պոլսի Սրբազն Պատրիարքից, առ այժմ «Արարատ» յառաջ չէ բերում այն բազմաթիւ անկարգութիւնների նկարագիրները, որոնցով լի են երոպական և տեղական լրագիրները: «Արարատ» առանձին հրառուանքով արձանագրումէ միայն այն փառը, որ Եւրոպայի քրիստոնեաները պաշտպան են հանգիստանում հալածուած հայ քրիստոնեաններին: Խնչուս լրագիրներն հաղորդումէն, առանձին եռանդ են ցոյց տալիս այդ խընդրում մանաւանդ Անզիայի եկեղեցականներն առանց դաւանութեան խորութեան, ինչպէս կարգինալ Առհանը, Քէնթրը բերի արքեպիսկոպոսն և Եկեղեցիների քարոզիչներն առհասարակ:

### ՊՈՐՈԿԱՍԱՆՈՒՄ.

Ազգիս Վեհափառ Հայրապետն Խր Գահը բաղմելու օրուանից առաջին խնամք է ցոյց տուել Պարսկաստանի Հայոց վրայ: Առաջա-

տականի համար թեմակալ առաջնորդ յղելուց յետոյ, Սորին Օծութիւնը յատուկ հովիւ ուղարկեց և Սպահանի հայերին, արքանապատիւ Ասհակ վ. Այսպատեանին, որպէս զի Գերապատիւ Եսայի Արքեպիսկոպոսը հնար ունենայ հեռաւոր Հնդկաստանի և Խաղաղական ովիտանոսի կղզիներում ցրուած հօտին այց գնալու և ի մօտոյ միթմարերու:

Առաջատականի թեմում օտար քարոզութեան առաջն առնելու և ընդարձակ զաւառներում ցրուած հայերին կենդանի խօսքով մահթարելու և իրենց հայրենի եկեղեցուն հաւատարիմ մնալու յորդորելու համար յատուկ քարոզիչ նշանակեց Սորին Վեհափառութիւն, արքանապատիւ Յովսէփ վ. Սատանանին, Ամերիկայի հայերի նախկին առաջնորդին:

Թագէի առաքելոյ վանքի կողոսպաման մասին տեղեկութիւններ ստանալով՝ Սորին Օծութիւնը ուղարկեց նորլնծայ Խաչիկ արեգային, որ վրահասու լինի եղելութիւններին և տեղեկագիր բերէ:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՄԿՐՏԻՉ ՃԱՌԱՅ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԵՆՇԵՍԱՆՆԵԼԻ ԿԱՄՈՔԻ ԱՍՏՈՒԺՈՅ ԵՓԻՍԿՈՊՈՍԱԳԻԵՏ ԵՒ ԿԱՄՈՒԴՈՒԿՈՍ ԱՄԵՆԵՆԵՐ ՀԱՅՈՅ ՃԱՅՐՈՒԹԻՅՈՅ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՐԴԱԳՈՒՄԵՆ, Առանձին եռանդ Են ցոյց տալիս այդ խընդրում մանաւանդ Անզիայի եկեղեցականներն առանց դաւանութեան խորութեան, ինչպէս կարգինալ Առհանը, Քէնթրը բերի արքեպիսկոպոսն և Եկեղեցիների քարոզիչներն առհասարակ:

Պատուարժան Խմբագրական յանձնաժողովոյն և Արարատ ։ ամսաթերթի:

Քանզի զրկեալ գտաներ պաշտօնական ամսաթերթն Մայր Աթոռոյս յուրցն վարչութենէ յոչ սակաւ ամսոց հետէ, վասն որց վստահ յուսումնասիրական եռանդն հետեւեալ անձանց պատշաճ վարկաք կազմել յանձնա-